

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Արուեստական ատամներն ազդեցութիւնը մարդկանց բնաւորութեան վրայ: — Եստանգամ է նկատուել, որ արուեստական ատամներ կրող մարդիկներէ շատերը, որոնք առաջ բարեսիրտ եւ հեզամարդոյր քնատրութեան տէր էին, այդպիսի ատամներ կրելուց յետոյ դառնում են զայրաքկոտ եւ քմախնդիր: Ամերիկացի մի բժշկի կարծիքով, այդ օտարոտի հանելուկի լուծումը պէտք է որոնել արուեստական ատամների մետաղի շերտերի մէջ, որոնք պատում են լնդերը եւ կողքերը ամրանում են ոլորտագիծ զսպանակներով: Նորա կարծիքով՝ երկու տարբեր մետաղներից կազմուած այդ պահպանակներն առաջացնում են վնասեան ազդեղի հիմնական տարրեր եւ զորա հետեւանքն այն է լինում, որ լորձիկների թթուեցնող ազդեցութեամբ յառաջանում է անվերջ ելքատրական հոսանք: Հի կարելի չմեղքանալ այդպիսի անմատուցիւններին, ասում է նա, որոնք ստիպուած են լքնդերների մէջ զետեղել իսկական էլէքտրայոյզներ, որից ելնող անվերջ էլէքտրական հոսանքները, թէեւ շատ թոյլ չափով, բայց եւ այնպէս, գրգռուած որոշեան մէջ են պահում Նոցա Նեարդային համակարգութիւնը: Ինչպէս յայտնի է, ելքատրական հոսանքի անցնելը կարելի է զգալ բերանով, օրինակ եթէ հետազոտական մարտիկի հաղորդիչ հետ միացնենք մի մետաղէ լար եւ լարի ծայրը դնենք ատամների վրայ: Այդպիսի դէպքերում բերում զգացում է յոյնպիսի թեթեւ գրգռի ազդեցութիւն, որպիսին թողնում է զետեղի ջուրը: Այդպիսի անդադար գրգռներին ծնունդն ընտելանում են եւ այլ եւս չեն զգում Նոցա անհամոյ տպաւորութիւնը: Բայց էլէքտրական թոյլ հոսանքի ազդեցութիւնն այնուամենայնիւ շարունակուում է եւ հետեւաբար պէտք է այդ ազդեցութիւնն էլ երեւայ մարդկանց քնատրութեան վրայ:

*
* *

Կօլա կամ սօլոդանի սուբ: — Հասարակածային Աֆրիկայի արեւմտեան ափերում բուսում է առատութեամբ մի տեսակ ծառ՝ *Sterculia acuminata* անուամբ, որ տալիս է մի տեսակ պտուղ՝ շագանակի մեծութեամբ, կիւնամորի գոյնով, որը տեղացիք կոչում են «կօլ»: Ռիկները վաղուց հետէ գործ են անում այդ պտուղն իբր կերակուր, իսկ համեղ համի եւ զարմանալի յատկութեան համար միջին Աֆրիկայի ամենից աւելի գործածական պտուղներից մէկն է: Բացի դորանից կօլա ընկոյզները նեղրները գործ են անում իբր մանր, փոխարինելու դրամ կենսական պիտոյքներ գնելու ժամանակ: Կօլա ընկոյզը կոչւում է եւ «գուրա» կամ «գուրու» ընկոյզ, իսկ հիւս. Աֆրիկէում՝ «բուսա», ծախուում է եւ բոված, որը կոչւում է «սուզանի սուբ»՝ եւ տեղական արդիւնաբերութեան գլխաւոր ծիւղերից մէկն է կազմում: Ռիկները կօլա ընկոյզին վերագրում են կատարեալ հրաշալի յատկութիւններ: Այսպէս օրայդ պտուղը ծամելուց յետոյ կարելի է խմել ամենալաւաակ կար եւ վատ ջուր, առանց վնասուելու, շատ լաւ պահւում է ատամները, իսկ զորա եփուցքը կամ մղուածքը, իբր խմելիք, պակեցնում է մարմնակազմի համար կերակրի եւ ջրի պահանջը եւ միեւնոյն ժամանակ տալիս է առողջութիւն եւ ոյժ, աւելացնում է եռանդը եւ աւելի աշխատանք ընդունակութիւն է պարգեւում: Ծանապարտողները պատմում են, որ նեղրներն առանց ուտելիքի եւ խմելիքի, միայն կօլա ընկոյզ ծամելով, աֆրիկայի կիզիչ արեւի ծառագայթների տակ ահագին ծանապարտ են անցնում, առանց որեւէ յոգնածութիւն զգալու: Վերջերս կօլան գրաւել է եւ Նուրագիների ուշադրութիւնը: Ի միջի այլոց

Ֆրանսիական աշխան ծանապարտողների ակումբը պատրաստել է տուել կօլայի խառնուրդով շօթ (galette) եւ կրկնեփ (biscuit) եւ իբր արած փորձերից յետոյ խորհուրդ տալիս լնդների վրայ ծանապարտողներին կամ արած բարձրանալ սիրողներին անհրաժեշտաբար գործ անել սոյ տեսակի շօթ կամ կրկնեփ: Այդ տեսակ շօթ գործածելով՝ Ֆրանսիացի սպանները կատարել են երկու հապճեա զինուորական տեղափոխութիւն առանց որեւէ յօգնութիւն զգալու: Իսկ մի Ֆրանսիացի գնդապետ իբր աշակից՝ սպայի հետ բարձրացել է Պերինեան լեռների 2800 մետր բարձրութիւն ունեցող զագաթը՝ 12 ժամուայ ընթացքում, կէս ժամ միայն հանգստանալով, որի ժամանակ վերին 6 կիլոմետր (3 մետր, 500 սաժ.) տարածութիւնը բարձրացրել է միայն մի ժամուայ: Նոյնպիսի յաջող ելք է ունեցել վերջերս՝ Հնդկաստանում Անգղիացի բժիշկ Ֆիրսի փորձերը յիսուն զինուորի վրայ: Ռուսաստանում էլ եղան մի քանի փորձնական հետազոտութիւններ կօլա ընկոյզի մարդու մարմնակազմի վրայ թողած ազդեցութեան մասին եւ ռուս բժիշկների ցուցումներն եւս բոլորովին համապատասխանում են Ֆրանսիացի Մոննէ, Մոնալօնա եւ Պերու հեղինակների ցուցումներին, — թէ կօլան յիբաի ունի զարմանալի գրգռիչ յատկութիւն, նուազեցնում է մարմնակազմի կենսական սպառումը, միեւնոյն ժամանակ աւելացնելով Նոցա ոյժն ու եռանդը՝ հակառակ միւս գրգռիչ միջոցների (ոգի, եթեր, սրժիտ եւլն.), որոնք թէեւ աւելացնում են եռանդը, բայց ի վնաս մարմնակազմի: Ուսուցչապետ Ծանովսկու կարծիքով կօլայի գործածութիւնը օգտակար է ոչ միայն այն դէպքերում, երբ Ֆիզիքական միջ աշխատանք է պահանջուում առողջ կազմուածք ունեցող՝ բայց սոված եւ յոգնած մարդուց, այլեւ ամեն տեսակ հիւժող եւ մաշող հիւանդութիւնների ժամանակ:



ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ

ՏԱՐԱԳԻՐ ԶԱՄԱՆՆԵՐԸ.

Պանդխտութեան հարցը յաճախ խօսքի եւ դրի առարկայ է եղել մեր մէջ. իրաւամբ համարուել է նա մեր ժամանակակից ազգային կեանքի ամենաակարեւոր հարցերից մէկը, ամենամիջրաւոր մի կոյմը: Նւերոպական շատ երկրների համար պանդխտութիւնը կամ աւելի ուղիղ մարդով՝ դաղթականութիւնը մի անհրաժեշտ պահանջ է. Նոցա մէջ մարդիկ այնչափ բազմացել են, որ այլեւս ամենքը բուն հայրենիքում սնունդ գտնել չեն կարող շա-

տերը ստիպուած են հեռանալ և նոր հայրենիք որոնելու աստի այդ երկրների կառավարութեան զլխաւոր հոգաբարձի մէկն է զուրաւր սահաւարնակ վայրենի երկրներում գաղթավայրեր գրաւելու և կարելի լինէր բնակեցնել մայր երկրից ելածներին, թող չտալով խղել նորա հետ քաղաքացիութեան կապերը: Մեղանում պանդխտութիւնը բոլորովին տարբեր հանգամանքներից է յառաջ գալիս և ոչ թէ անհրաժեշտ մի պահանջ է մեր հայրենիքի համար, այլ մի անպայման անդարմանելի չարիք. անդարմանելի ի հարկ է այն պատճառաւ որ նորան յառաջ բերող հանգամանքները մեծ մասամբ ազգային շրջանակից զուրա են և ուրեմն մեր իբրև հայ մարդոց, ազգեցութեանը անմիջապէս չեն ենթարկուում: Եղել են ժամանակներ, որ պանդխտութիւնը իւր բարի հեռանքներն ևս ունեցել է. օտարութեան մէջ գտնուող հայերը մեծ հարստութիւն ձեռք բերելով, քաղաքակիրթ ժողովրդների հետ ունեցած շփմամբ կրթութեւում և նոր գաղափարների, նոր աւելի ընդարձակ աշխարհահայեցողութեան տէր դառնալով, հոգ են տարել և միջոցներ գործ դրել թեթեւացնելու իրենց թշուառ հայրենիքում մնացած ազգակիցների ծանր վիճակը՝ նոցա կրթութեան և հոգեւոր վերաշինութեան գործի համար զոհաբերութիւններ են յանձն առել: Այժմ այդպիսի բարի հեռանքներ շատ աւելի սակաւ չափով է ունենում պանդխտութիւնը. օտար երկրներ գաղթած հայերը ոչ միայն այնչափ նիւթական և բարոյական կարողութիւն չունին, որ իրենց ազգակիցներին օգնեն, այլ և առհասարակ կարօտ են նոցա օգնութեան: Յիրաւի պանդխտութիւնից վերադարձողները շատ անգամ հարստութիւն իրենց հետ բերում են՝ որոշ չափով աշխարհածանօթութիւն են բերում և քաղաքակրթութեան տարրեր մտցնում հայրենիքի ամենախուսար անկիւններում, բայց նոքա բերում են նաև կիսաքաղաքակիրթ աշխարհի բաղմամբ ախտերն ու մոլութիւնները, որոնք շատ աւելի կործանիչ ազդեցութիւն ունին այստեղ՝ ազգային կեանքի մի շարք ամբողջութիւններ կորցրած ասիական ժողովրդի վերայ, քան իրենց բուն հայրենիքում:

Սակայն խօսել առհասարակ պանդխտութեան մասին և նորա հեռանքները թուել մեզ շատ հեռու կտանէր. մեր նպատակն է միայն մի քանի խօսքով յիշեցնել այստեղ թէ ինչ պարտականութիւններ ունինք դէպի օտարութեան մէջ գտնուող հայերը և ինչ կարող ենք անել նոցա համար: Ինչպէս ասացինք, նոքա կարօտ են հայրենիքում մնացածների օգնութեան: Այդ օգնութիւնը կարող է զանազան կերպով լինել, բայց մեզ առաջնորդող տեսակէտն այն պիտի լինի անշուշտ, որ նոքա կապուած մեան իրենց անցեալի, իրենց ազգի, իրենց հայրենիքի հետ և շարունակեն օգտակար լինել նորան: Պապել հայրենիքի հետ ամենից դժուարին խնդիրն է և այդ յառաջ տանելու համար մենք ամենից պակաս միջոցներ ունինք: Եայտնի է, որ նոյն իսկ շատ աւելի մեծ և փառաւոր ազգութիւններից կարուած անհատներ և համայնքներ հեռութեամբ կապուած են իրենց նոր հայրենիքի հետ և մոռանում հինը. օտարութեան մէջ ապրող առաջին սերունդը միայն բնազդաբար կապուած է իւր նախկին հայրենիքի հետ, երկրորդ, երրորդ սերունդի համար ծննդավայրը դառնում է իրօք հեռզհետէ, նաև հայրենիք, և միայն անկենդան գաղափարական յիշողութիւններ են պահում նոքա հայրենական երկրի համար: Բարոյական կապերն են, որ հեռութեամբ չեն խզուում և ամենազօրեղ բարոյական կապը, որ մի ցրուած ժողովրդի անդամներին իւրար հետ և իրենց անցեալի հետ կապել կարող է՝ քրիստոնէական եկեղեցին է: Եկեղեցւոյ գաղափարական միութիւնը աշխարհային պայմաններից անմիջապէս կախումն չունի. նոյն եկեղեցւոյ անդամները կարող են գտնուել կլիմայով և քաղաքակրթութեամբ բոլորովին տարբեր և միմեանցից շատ հեռու գտնուող երկրներում: Բայց մի շարք աշխարհային պայմանների, որոնք անցեալում եկեղեցական կեանքի զարգացման հետ անմիջապէս կապուած են եղել, նորա շնորհիւ նուիրականութիւն են ստանում և պահում իրենց հեղինակութիւնը դարէ ի դար նաև այն սերունդների աչքում, որոնց համար այդ պայմաններն այլևս անմիջական նշանակութիւն

շուենիւ։ Այդպէս են օրինակ եկեղեցւոյ գաղափարի հետ կապուած ազգութիւնն ու հայրենիքը։ Շատ անգամ կրկնուած ճշմարտութիւն է, որ օտար երկրներում հայերը լեզու և ամեն ազգային սովորութիւն մոռանալով՝ շարունակում են իրենց հայ անուանել այն դէպքում միայն, երբ իրենց անգամ են ծանաչուած ազգային եկեղեցւոյ, օտար տեղում մարդիկ մոռանում են իրենց հայրենի ծննդավայրը՝ իրենց հայրենիքի բռնական զեղեցկութիւնները, նոյն իսկ պատմական յիշատակները նոցա չեն գրաւում։ Բայց գրաւում են այն սրբավայրերը, այն ուխտատեղիները, որոնց հետ կապուած է իրենց կրօնական կեանքը։ Հետևաբար, եթէ մեր ցանկութիւնն է և մենք պարտք ենք զգում նըպաստելու, որ մեր օտարութեան մէջ ցրուած ազգակիցները ամուր պահեն իրենց անցեալի հետ կապող բարոյական կապերը, պէտք է ամենից առաջ աշխատենք, որ ամուր մնայ նոցա կապը ազգային եկեղեցու հետ, որ այդ եկեղեցին շարունակէ որչափ կարելի է մեծ չափով բարոյական ազդեցութիւն գործել նոցա վերայ։

Այս խորհրդածութիւններն անելու առիթ եղաւ մեզ Ամերիկայից՝ բոլոր ազգերի այդ ամենամեծ գաղթավայրից, ստացուած մի գրութիւն, որից կարելոր ենք համարում քաղել հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնները։

Հայերի թիւն Ամերիկայում մօտ 10,000 են հաշուում որոնցից 6000 և աւելին Բոստօնում և մինչև 3 ժամ հեռաւորութեան վերայ գտնուած շրջակայ տեղերում են ապրում, իսկ մնացեալները ցրուած են 2իկադոյի մօտերքում, Վալիֆորնիայում և ուրիշ տեղեր։ Այս բոլորի մէջ հազիւ 250-ի չափ ընտանիք լինի։ Աաճառականութեամբ պարագլուներ թիւը 25-ից աւելի չէ։ առհասարակ հազիւ 5—7 անկախ պարագլուներ և ապահով ապրուստ ունին, մնացած մեծազոյն մասը ամենահասարակ և ամենաքիչ վարձ բերող բանտորութեամբ պարագլու ստիպուած է։ այն ևս մօտ 20% սոցանից վերջին տարիները գրեթէ շարունակ առանց գործի է մնում։ Բնականաբար այսպիսի պայմանների մէջ նոցա վիճակն աւելի քան անախանձելի է։ Ըստ մեծի մասին բոլորովին տգէտ լի-

նելով, նոյն իսկ հայերէն գրել կարգալ չիմացող, և հազիւ միայն 5% տեղական լեզուին ծանօթ՝ նոքա չեն կարողանում ի հարկ է յաջողութեամբ մրցել կրթութեամբ իրենցից շատ աւելի բարձր, շրջապատող հանգամանքներին ընտել տեղացիների կամ եւրոպացի եկուորների հետ, չփութն են ունենում միայն ամբողջ ամենաստորին խաւերի հետ և ամենավատ, ամենամերայակամացուցիչ աղքեցութիւնների ենթարկուում։ Եթէ աւելացնենք դորա վերայ նաև անսովոր կլիմայի, վատառողջ բնակարանների, վատ սնունդի ազդեցութիւնը՝ դարմանալի չպէտք է երեւայ այն ժամանակ տեղական հայ բժիշկների առուած քստմնեցուցիչ տեղեկութիւնը, թէ 50% սոցանից վարակուած է զանազան հիւանդութիւններով։ Այսպիսի յեկեալ գրութեան զըլխաւոր մի պատճառ պէտք է համարել նոցա կրօնական, հոգևոր, բարոյական միութարութիւնից գրեթէ բոլորովին դուրկ լինելը։ Ինչպէս յայտնի է, Հայերը մինչև այժմ մի եկեղեցի միայն ունին՝ Աւստր քաղաքում, ուր Տաճկաստանից իբրև հովիւ ուղարկուած վարդապետները, հասակաւոր հին կարգի մարդիկ լինելով՝ դժուար կարող էին իրենց պաշտօնը կատարելուց դատ, տեղական պայմաններն ուսումնասիրելու և ընդարձակ շրջաններում ազդեցութիւն ձեռք բերելու տենչ և եռանդ ցոյց տալ։ Աերջերս տեղացիների խնդրանք և Ահհա-փառ Հայրապետի հրամանով Ամերիկա ուղարկուեցան Արմաշու Իպրեմանքի սաներից երկուսը՝ Փաշտոց և Վաղինակ վարդապետները, առաջինը Աւստրիի համար և երկրորդը Պրովիդենսի, ուր նոյնպէս մի հայկական համայնք է կազմակերպուել և մի հովիւի համար տեղ պատրաստել, Թէ և երկու համայնքներն ևս նիւթական անձուկ վիճակի մէջ են և առատ վարձատրութիւն իրենց հովիւներին տալ չեն կարող, բայց պէտք է յուսալ, որ երկու երիտասարդ, ուսումնաստենչ և լաւ պատրաստուած հոգևորականներ այդ և նման զրկանքների արհամարհելով պիտի կարողանան շուտով անդիներէն լեզուին համանալ և կրօնական, մասնաւոր թէ գործնական, կեանքի մէջ այնչափ եռանդ ու բազմակողմանի հմութիւն ցոյց տուող ամերիկացիներից շատ բան սովորելով՝ քաջարթուն հովիւներ պէտք է լինին բառի բուն նշանակութեամբ, բարի օրինակ դառնան և ասպարէզ բանան ուրիշ իրենց նմանների համար։ 10,000 հոգուց բաղկացած մի ցրուեալ հօտի բոլոր կարիքներն ի հարկ է այսպիսով հոգացուած չեն լինի։ Բորդ ընկերութիւնը, առանց դաւանութիւն ի նկատի առնելու՝ մի հայախօս միսիոնար և 8 բողոքական հայ պաշտօնականներ է կարգել հայերի համար դանազան քաղաքներում, բայց նոքա շատ քիչ բարոյական և կրթական ազդեցութիւն են ունենում ոչ միայն հայ եկեղեցուն պատկանող, այլ նոյն իսկ բողոքականութիւն ընդու-

նած հայերի վերայ՝ որոնք ամբողջի 10% են կազմում միայն, Այստեղ եկող փոքր ի շատե կրթութեան հայերից մեծ մասը ամերիկական միսիոնարներէ զըպրոցներում են ուսել. բայց դաստիարակութեան չլինելով ազգային հոգւով՝ նոքա այն եռանդը, այն անձնութիւնը, այն ոգևորեալ սէրը դէպի իրենց ազգակիցները ունենալ չեն կարող, որ անհրաժեշտ էր այսպիսի մի տեղ առանց անձնական շահերի գործելու և արգիւնք բերելու համար:

Անգլիկան եպիսկոպոսական եկեղեցին, որ Բօրգ ընկերութեան, և առհասարակ բողոքականներէ, Հայոց մէջ ունեցած միսիոնարական գործունեութեանը ամենեկին համակիր չէ և Հայոց եկեղեցին իրեն «Առաքելական քոյր եկեղեցի» է ընդունում՝ պատրաստակամութիւն է ցոյց տալիս ոչ միայն իւր դռները հայոց առաջ բանալու, երբ կամենան որ և է կրօնական պաշտամունք կատարել, այլ նաև նիւթապէս նպաստելու, որ Հայոց եկեղեցւոյ կողմից հովիւներ նշանակուին անխնամ մընացած համայնքների համար, անգուցեալ Յ. Խաչումեան Բոստոնում եղած ժամանակ յաջողել էր բարեկամների գործակցութեամբ կիրակնօրեայ ժամասացութիւն կազմակերպել այնտեղի ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, Այժմ նոյն գործը վերսկսել և շարունակում է Աւետիս Սէլեան անուումի Կեսարացի մի եռանդուն երիտասարդ, որ Ալէքսանդրիայի հանգի համալսարանում երկրագործական մասնաճիւղն աւարտելուց և Զիկագոյում կատարելագործելուց յետոյ այժմ ի միջի պլոց աստուածաբանութեան դասախօսութիւններ է լսում Կէմբրիջում (Բոստոնի մօտ): Այդ երիտասարդը սկսած Զիկագոյից, ուր մի քանի տարի առաջ ժամասացութիւն է կազմակերպել և ազգ. գրադարան հիմնել, բաղմամբիւ հայաբնակ տեղիւր պտտելով՝ աշխատել է պանդուխտ ազգակիցների ցաւին ի մօտոյ ծանօթանալ, ազգային բարոյական, կրօնական կեանք արծարծել նոցա մէջ, Այժմ ամեն կիւրաքիւ առաւօտ նա ժամասացութիւն է ղեկավարում և քարոզ խօսում Բոստոնում (որի համար թեթեալ գրամական նպաստ է ստանում եպիսկոպոսական եկեղեցւոց), իսկ ճաշից յետոյ փոփոխակի լինում և Բրայտընում: Յանկայի չէր արդեօք, որ այս երիտասարդի օրինակին հետեւողներ գտնուէին ոչ միայն այդ և ուրիշ պանդուխտութեան երկրներում, այլ նաև այստեղ մեզանում, ուր նման կարիքներ շատ կան, ցանկալի չէր մանաւանդ, որ գտնուէին Անգլիկան օտար եկեղեցւոյ ներկայացուցիչների օրինակին հետեւող կարողութեան տէր ազգայիններ, որոնց սրտին նոյնչափ ցաւ ազդէր իրենց սեփական ազգակիցների անմխիթար դրութիւնը և որոնք նիւթական և բարոյական նպաստներով ձեռնտու լինէին հանելու նոցա այդ դրութիւնից, օրինակի համար, թույլ կապելով ճեմարանաւարտ կամ գոնէ զըպ-

րանոցաւարտ երիտասարդների և քահանայ ձեռնադրել տալով՝ պանդուխտ հայերի մօտ, նոյն իսկ Ամերիկա ուղարկէին, ուր այնտեղի զարգացած կրօնական—գործնական կեանքի մէջ նոքա կսովորէին, թէ որչափ բան կարող է անել մի քահանայ (թէկուզ կուսակրօն), երբ պաշտօն չէ կատարում միայն, այլ հովուում է հօտին՝ Քրիստոսի աշակերտին վայել արթնութեամբ, և ապա հայրենիք վերադառնալով այստեղ ևս քաջարթուն, բաղմամբորձ հովիւների օրինակ կլինէին ու կնպաստէին գուցէ իսկական հովութեան գաղափարը մտցնելու մեր մէջ:

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Գեր. Տ. Խորէն եպիսկոպոսը, Արժ. Տ. Թադէոս (Առիւծեան) և Տ. Յովհաննէս (Բաղունի) վարդապետները մեկնեցան իւրեանց վանահայրութեան պաշտօնատեղերը, առաջինը՝ Խրիմու ս. Խաչ վանքը, երկրորդը՝ Թիֆլիզի ս. Սարգիս եկեղեցին (վարելու է նաև ս. Էջմիածնի կալուածների կառավարչի պաշտօնը), իսկ երրորդը՝ Մակուայ ս. Թադէոս առաքելոյ վանքը:

Աւերադարձաւ ս. Էջմիածին Գեր. Տ. Խոսայի Արքեպիսկոպոսը, որ դեռ անցեալ տարի մայիսին հրաժարական էր տուել Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի առաջնորդութիւնից՝ անձնական տկարութեան պատճառով:

Փոխանորդական գործով ս. Էջմիածին եկաւ Ալէքսանդրապօլի յաջորդ Տ. Յովհաննէս վարդապետը (Շիրակունի) և այս քաւի օրս կմեկնի իւր պաշտօնատեղին:

Մայր Աթոռի տպարանի գործով մեկնեցաւ Թիֆլիզ Տպարանական ժողովի անգամ Ընորհ. Առեկաս սարկաւազը:

Արժ. Տ. Եփրեմ վարդապետը հրամանաւ նորին ս. Օծութեան կարգուեցաւ անդամ վիճ. Ամսխատորիային Հայոց Քիչնեկի: